ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 139-Ա/3 «15» օգոստոսի 2024թ.

«ԱԶԱՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿԻ» ԱՁ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-24/59» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2024 թվականի օգոստոսի 15-ի նիստի արձանագրությունն առ այն, որ գնման ընթացակարգի 8-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից «Ազատ Հայրապետյան Անդրանիկի» ԱՁ-ին էլեկտրոնային եղանակով՝ eauction.armeps.am համակարգի միջոցով ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ և կնքվելիք պայմանագրի նախագիծը, սակայն վերջինս «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում չի ներկայացրել ստորագրված պայմանագիրը, որակավորման ու պայմանագրի ապահովումները, և «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն «Ազատ Հայրապետյան Անդրանիկի» ԱՁ-ն 8-րդ չափաբաժնի մասով զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից, ինչպես նաև ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2–րդ մասով ու «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «Ազատ Հայրապետյան Անդրանիկի» ԱՁ-ին (ՀՎՀՀ՝ 28062393, գործունեության հասցեն՝ ք.Երևան, ՀԱԹ Բ3 Միքայելյան փ. 72շ. 49բն.) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

8/15/2024

ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Signed by: HAKOBYAN HASMIK 5610800161 ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ